

Stigmu. Lh.

Խայր մեծ պայմաններ
ուսուցիչ Ռիգով

15n
N1319

ՀԱՅՈՑ ՄԵՇ ՎԱՐԴԱՊԵՏ

ՍԱԻՐԲ 1999

ՄԵՍՔԱԾ ԹԸ



ԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԱՄ ՄԵԼԵԿԵ

Թ Բ Ֆ Լ Բ Ս

Ո: ԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ltn

1319

1883

1123

ՀԱՅՈՅ ՄԵՇ ՎԱՐԴԱՊԵՏ

ՍՈՒՐԲ

Մ Ե Մ Ր Ո Գ Ը

ՀԱՅՈՅ ՄԵՇ ՎԱՐԴԱՊԵՏ
ՎԱՐԴԱՎԱՐ ՎԱՐԴԱՎԱՐ ՎԱՐԴԱՎԱՐ

ԱԺԽԱՏԱՍՈՒՐԵՑ

ԱՐԱՄ ՄԵԼԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. ՎԱՐԴԱՎԱՐ ԵԽ ԸՆԿ

1883


Հայոց թիվ 1883 ամիսի 23 նոյեմբերի:

ՏՅԱՐԱԿԱՆ ՎԻ ՑՈՒՄ

ՊՊԻԱՆ

Ֆ Պ Ո Ղ Ա Մ Վ Ս

Доз. Цензурою. Тифлисъ, 17-го Июля 1883 года.
Тип. М. Вартанянца и К-", на Тройц. пер. д. № 11



Վ Բ Ա Ջ Ե Վ Ա Խ Ա Վ

28 1329

41319-60



Ա Մ Կ Ո Ր Ա Վ Ի Ռ Ո Ւ Մ Ա Խ Ա Վ

Այրութենք Հայոց ազգեալ ի հոգւոյն,
Թարգմանչին Մեծի Մեսրոպ Բարունեայն:

ի Սամսոտիա քաղաքի Փոքրւն Հայոց, յամի տեառն 406:

ՆՈՐԻՆ ԱՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ

ԿԶՄԻԱՏՆԻ Ս. ՍԵՆՈԴԻ ԱՆԴԱՄ


ԳԵՐԱՊԱՏԻՒ

ՄԵՄՐՈՊ ԵԳԻՒՅԿՈՎՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑԻՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՈՔ

ԽՈՒԹՈՒՄ Կ

աշխատասիրողը



ԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Անցեալ 1882 թ. Տիմիսի Հայոց առաջին ընդհանուր տուոցյական ժողովի երեկոյեան նախերից մէկում վճռուեց Ս. Մեսրոպի եւ Ս. Սահակի տօները համապեկ զուտ դբրոցական տօն եւ կառարել հանդիսով։

Հոկտեմբերի 9-ին մեր եկեղեցին այդ մեծ մարդերից առաջինի տօնն է կառարում։ Հէնց այդ օրուայ առիթով էլ պատրաստել էի ներկայ աշխատասիրութիւնս, որին տեղական «Պ ս ա կ» լրագիրը հաճութեամբ հիւրասիրեց իր էջերում։

Հայոց գրականութեան ծնող, ազգի ու եկեղեցու համար ծառայող սերունդը նախապատրաստող երկու ամոլներից՝ — Ս. Սահակի թէ Ս. Մեսրոպի — մեծագործութիւնները գրելու համար, գիտեմ, անհամեմատ աւելի հմաւտ ու փորձուած գրիչ է պէտք, քան աէ իմ տկար ու անփորձ զըրիչը։ Եւ ես երբէք թոյլ չէի տալ ինձ յանդուզն աշխատութիւնս, «Պ ս ա կ»ից արտատապելով, առանձին գրբոյիի վերածել, եթէ ըլ լինէին ծանօթ ընթերցողներիս ու բարեկամներիս յորդորներն ու համոզումները։ Այս յորդորներին ու համոզումներին միայն վատահանալով՝ համարձակ քալս այս արի։

Փ' թրիկ աշխատութիւնս կազմելու համար՝ օգուտ եմ քաղել՝ Խորենացու, Զամշեանի Կորինի պատմութիւններից, Աւգերեանի «Վարք Սրբոց»ից եւ «Հիւսիսափայլից»։

1883 թ. Ապրիլի 15.

Երեւան,

Ա. Մ.

արդյունքությունը պահանջեց Ա ՀՅ Ռ. 1981 թվականի
մայիս թվականի պահանջման վերաբերյալ պահանջառ գործը և արդյունքը պահանջեց Ա ՀՅ Ռ. Ա ՀՅ Ռ.

Արդյունքը բնակչության և տնական
տնտեսական ուղղության վեհանդարձությունը և պահանջությունը պահանջման համար այլ ազգային գործությունների ուղղությունը պահանջեց Ա ՀՅ Ռ. Ա ՀՅ Ռ.

Արդյունքը բնակչության և տնական
տնտեսական ուղղության վեհանդարձությունը պահանջման համար այլ ազգային գործությունների ուղղությունը պահանջեց Ա ՀՅ Ռ. Ա ՀՅ Ռ.

Արդյունքը բնակչության և տնական
տնտեսական ուղղության վեհանդարձությունը պահանջման համար այլ ազգային գործությունների ուղղությունը պահանջեց Ա ՀՅ Ռ. Ա ՀՅ Ռ.

Արդյունքը բնակչության և տնական
տնտեսական ուղղության վեհանդարձությունը պահանջման համար այլ ազգային գործությունների ուղղությունը պահանջեց Ա ՀՅ Ռ. Ա ՀՅ Ռ.

Ա. Ա.

Ժ Ա Ի Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Յ Ա Յ Ո Ւ Թ Ե Յ

Հ Ա Ր Ա Վ Ա Յ Ա Յ Ո Ւ Թ Ե Յ

ՀԱՅՈՅ ՄԵԾ ՎԱՐՈՂՊԵՅ

ՍՈՒՐԲ ՄԵԾ ՍՐՈՎԸ

Ա.

Արշակունեաց հարստութեան բարձուած
միջոցումն էր: Հեց այն ժամանակ,
որի համար քերթողահայրն մեր Խո-
րենացին Մովսէս արցունք աչքերը լցրած, ողբ
ի բերան առած՝ հեկեկում էր. «Ողբամ զքեզ,
Հայոց աշխարհ»... «Ողորմիմ քեզ, եկեղեցի
Հայստանեաց»:

Լուսաւորիչ Գրիգորի տան վերջին ճրագ
ՄԵԾՆ Սահակ հայրապետի հանգչելով՝ կաթու-
ղեկոսական աթոռի վրա արդէն վեց ամիս էր,
որ նստած էր, իբրև տեղապահ, նրա «Համա-
շունչ ընտրելակից» Ս. Մեսրոպը:

Վաղարշապատ քաղաքումն էր. 441 թւա-
կանին, փետրվար ամսի 19 ին. Հայոց կաթու-
ղեկոսարանում մի ութսունումիամեայ սուրբ

1183

ալեոր էր պարկած հիւանդութեան անկողնում։ Շուրջը պատել էին իր աշակերտներից՝ Յովսէփ, Թաթիկ, Հայոց իշխաններից՝ Վահանն Ամատունի, Վարդանի եղբայր Հմայեակը Մամիկոնեան և ուրիշ շատերը։

Ամենքն ընկզմուած էին խորին տրտմութեան մէջ և իրենց հանդէպ անկողնում պարկած մեծ մարդին էին նայում լուռ, անխօս, թախծալից աչքերով։ Նրանցից ամեն մինը մտաբերում էր Քրիստոսի Աւետարանի այն եռանդուն քարոզիչը, Հայոց ազգի, այդ ժամանակ անթագաւոր, անհովիւ մնացած Հայաստանի միիթարիչ Հրեշտակը, որ գիշեր ցերեկ շրջում էր անդադար գիւղից գիւղ, աւանից աւան, քաղաքից քաղաք՝ սիրոյ և եղբայրութեան հրաւերն ամեն տեղ կարդալու, լուսաւորութեան կարսրաններն ամեն տեղ հաստատելու, Աստուածային պատգամները սիրելի ժողովրդին մատակարարելու... Այս, մտաբերում էին այդ ամենը և դառնութեան արտասուքով սրտները ողողում, տեսնելով, որ այդ հոլակապ մարդը շուտով տալու էր իր վերջին օրհնութիւնն իր սիրած ու փայտած հայրենակիցներին։ Կարճօրեայ հիւանդութիւնից յետու, երբ ս.

ալեռը, «ալին Աստուծոյ» սուրբ Մեսրոպը զգաց, որ ժամանել է արդէն իր կոչման կէտը, ցաւիցը թեթեւացած ու սթափած՝ վրա նատեց, առաքինագործ ձեռքերը գէպի երկինք բարձրացրեց և իր հայրական, իր սրբազն, իր վերջին օրհնութիւնը ժողովրդի ուներկալ եղողների վրա թափելով, բոլոր մնացողներին էլ Աստուծոյ շնորհացը յանձնեց։

Այն ժամանակ, երբ «երիցս տօնելի» Մեսրոպի ձեռքերը գէպի երկինքն էին կարկառած—գրում է պատմագիրը—խաչանման լուսաւոր շողաւոր ձեռվ մի սքանչելի տեսիլ երեւցաւ այն ապարանի վրա, ուր որ էր Սուրբը։ և այդ էլ ալնպէս յալտնի ու ակներև, որ ամենքն էլ հեռուից տեսնելով, և ոչ թէ ընկերից լսելով, խուռն բազմութեամբ վազում էին գէպի այդ տեղը։

Եւ հէնց այդ ժամանակում իր մօտ ժողովածներին վերջին ողջոյնը տալով, «սէր, միաբանութիւն» կտակելով նըանց, օրհնութեամբ օրհնելով հեռաւորներին ու մերձաւորներին, նոյն ժամայն Աստուծոյ ձեռքն աւանդեց իր Սուրբ Հոգին։

Իսկ դուրսն ու ներսը խռնված ժողովուրդը տեղեկանալով սուրբ Մեսրոպ Թարգմանչի

փոխումը՝ սքանչանալով՝ զարմանում էին ու
փառք տալիս Աստծուն։ Նատերն էլ անհա-
ւատներից այդ տեսիլքին նայելով՝ հաւատի
դարձան։

Սուգ ու ողբը տիրեց ամենին։ Այլ ևս չը
կար հասարակաց հայրը, մտքերի լուսաւորի-
չը, հայոց մեծ վարդապետ սուրբ Մեսրոպն
եմ ասում, որ, ինչպէս գրում է հայր Խորե-
նացին, «գերազանցած էր այն ժամանակուայ
բոլոր առաքինի մարդկանցը։ Որովհետև նրա
վարքի մէջ ամբարտաւանութիւնն ու մար-
դահաճութիւնը տեղ գտնել չը կարողացան,
այլ լինելով հեղ, լաւակամ և բարեխորհուրդ,
երկնալիների սովորութիւններով ամենից զար-
դարուած էր իր անձը ցոյց տալի։ Պատճառ
որ, էր նա տեսքով հրեշտակական, մաքով
ծննդական, խօսքով պայծառ, գործով ժուժ-
կալ, մարմնով արտափայլ, սարսափով անճառ,
խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ,
յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսու-
ցանելով անձանձոյթ»։

Եթե այս առաջարկը հաջող է առնալ, ապա
որ առաջարկը հաջող է առնալ, ապա
որ առաջարկը հաջող է առնալ, ապա

արօն (Մուշ) գաւառի Հայիկ գիւղի մէջ,
ՅԵՒ թւէին էր ծնուել Մաշտոցը (Մես-
րոպի առաջին անունը Մաշտոց էր)։ Մաշտոցն
իր մանկութեան օրերն անցնելով իր հայր աս-
տուածասէր ու երանելի Վարդանի հոգաբար-
ձութեան տակ, սեփականեց նրանից ճշմարիտ
աստուածասիրութիւն ու բարեպաշտութիւն,
որոնք յետոյ աւելի ևս աճեցին, գտուեցին նրա
մէջ այնպիսի մի մեծ մարդու, մեծ ուսուցչի
դեկավարութեամբ, որպիսին էր Մեծն ներսէս
հայրապետը։

Մանկական օրերից վարժուելով հելենական
դպրութեան մէջ, խելամուտ լինելով ասորի
ու պարսիկ լեզուներին՝ աշակերտեց Մեծ ներ-
սէսին և այնքան դուր եկաւ նրան, որ յետոյ
նրա նոտարը և միանգամայն սիրելին դարձաւ։
Մաշտոցն էր, որ Մեծն ներսէսի մահուան
ժամանակ մօտը գտնուելով, նրա մարդարէա-
կան գուշակութիւնների առաջին արձանագրո-
ղըն եղաւ։

Մեծն ներսէսի մահից յետոյ Մաշտոցը գլ-

նում է արքունի դուռը և մնում է այնտեղ, արքունական դիւնատան մէջ, հայոց Վարագգատ, Արշակ, Վաղարշակ, վերջին Խոսրով թագաւորների և մեծ իշխան Առաւանի Հազարակետութեան օրերում, կարգուելով գեւանադպիր (քարտուղար) թագաւորներին՝ իշորհս իր բազմահմտած գիտութեան ու գրաւոր ճարտարութեան։ Բացի սրանից, նա ամեն կերպ լաջողակ էր նաև արքայատուր հրամանների սպասաւորելուն։ Այսպէս, մինչև Խոսրովի երրորդ տարին, եօթը տարի մնալով գրան մէջ, թագաւորութեան ամեն կարգերում քաջահմուտ ու կիրժ, մինչև անզամ զինուրական մարգերի մէջ ևս վարժ լինելով, գրաւեց նա իր գօրականների սէրը և ըստ ամենայնի սիրելի դարձաւ թագաւորին։

Չը նայելով որ արքունիքում սիրու և համակրանքի մէջ էր, չը նայելով որ գարնան առաւօտի պէս անուշօրէն ծիծաղում էին նրա առաջ շռալլ ու փափուկ կեանքը, բարձր պաշտօնները, գանձ ու պարգևներն, այնու ամենայնիւ նա կարողացաւ հոգու լաղթանակը փայլեցնել, մարմնայիններն ու անցաւորներն արհամարհել...։

Հայոց աշխարհի քաղաքական իշխանու-

թեան այնպիսի ալեկոծ ժամանակում, ատենադպրութեան ու զինուրութեան այնպիսի անպարապ զբաղմունքների միջոցում, դարձեալ ժամանակ էր գողանում Մաշտոցն աստուածեղէն գրքեր կարդալու և գիշեր ցերեկ անխոնջ գեգերվում էր աստուածատուր հրամանների մէջ կատարելապէս հմտանալու համար։

Տեսնելով հայոց թագաւորութեան վտանգի մէջ լինելը, տեսնելով բարք ու վարքերի ընդհանուր խախտումը, կարծես, մի երկնային ներշնչումով՝ թողեց արքունիքը, թողեց մարդկային ընկերութիւնը, մերկացաւ աշխարհային ցանկութիւններից, առաւ Յիսուս Քրիստոսի խաչը և Փրկչի քաղցր լծով ու թեթև բեռնով՝ խաչակիր գնդին խառնուեց։



ոգևորականութեան կարգը մտնելով, Մաշտոցը Գողթան գաւառի մենաստաններից մէկի մէջ, հրեշտակակըօն սըրութեամբ զօրանում էր աստուածալին սպասաւո-

բութեան մէջ։ Նա ամենքի համար սքանչելի
վարքի մի կենդանի օրինակ հանդիսացաւ։
Այս տեղ, վանքի մէջ ևս Մաշտոցը չէ գլու-
նում այն իր ցանկալի յարմարութիւններն ու
սնունդն, որի համար բարախում էր սիրտը։
Երկնալին մտքերով լցուած Մեսրոպը մի
ուրիշ տեղ, մի ուրիշ վայր էր որոնում, որ
կարողանար խիստ խնամածութեամբ անվտանգ
ծննդաբերել իր մտաւոր արդինքը։ Եւ այդ-
պիսի տեղ գտաւ դաշտերի, անապատների,
անտառների ու լեռների մէջ։ Այդ տեղ, միայ-
նութեան գրկում՝ գլխովին անձնատուր եղաւ
իր ձգտումներին, իր միտումներին։ Այդ տեղ
ամենայն մտադրութեամբ ականջ կախեց իր
ներքին ձայնին, լսեց նրան և այդ հզօր ձայ-
նի հրամանն ու պատուերը ճշդիւ կատարելու
համար իրեն որոշ ուղղութիւն, բնաւորութիւն
և անլողողութ կամք ձևակերպեց։

Մաշտոցը զբաղուած լինելով իր հոգեկան
պահանջներին, վսեմ գաղափարներին սնունդ
տալով, խսպառ մոռանում է մարմնականը։
Կարծես, բոլորովին մտահան է անում, որ իրեն
հաց, շոր, անկողին ու բնակարան է հարկա-
ւոր։ Նա, կասես, առանց զգալու տանում է
և քաղց և ծաղաւ և' անլոյս արգելանք։ Բա-

ւականանում է բանջարներ ուտելով, խարազ-
նազգեստ ու գետնատարած անկողնով։ Չատ
անգամ գիշերային հանդիսաւը—քունը ոտքի
վրա է վճարում մի քանի ակնթարթի մէջ։
Հասարակութեան աղմկալից ընկերութիւնը
միշտ հալածել է իր միջից, քշել է գէպի ա-
նապատ ու դաշտ, գէպի սար ու անտառ առ
հասարակ բոլոր այն լեղափոխող մեծ մարդ-
կանցը, որոնք, կարծես թէ, թուխս նստած
են եղել իրենց միտումների ու խորհուրդների
վրա։ Միայնակեցութիւնը բաց է արել, որո-
շել է, պարզել է այն մեծ կոչումը, որի հա-
մար հրաւիրուած են եղել նրանք, այն մեծ
պարտքերը, որ վճարելու էին իրենց երկրաւոր
կեանքի մէջ։ Այս տեսակ մեծ մարդկանց կար-
գիցն էր և Ս. Մեսրոպը։

Մի քանի ժամանակից լետոյ պարզուեց
Մաշտոցի սրտի վրա ծանրացող աղջամուղջը,
բացուցեցին մտքի աչքերը և որոշակի կերպով
կարգաց իր կոչումը։ «Եւ-ն-պո-լինել իր աղջի
իրեն լուսաւոր նետանը նէ դրա-որ վարդապե-
տու-նետամէ և նէ բերանացի ուրբաղ-նետամէ»։

Նատ չանցաւ, և Մաշտոցի հոչակը տարա-
ծուելով զանազան տեղեր, բաւական աշակերտ-
ներ հաւաքեց սուրբ եկեղեցականի շուրջը,

որ և անձանձըութ կերպով հրահանգում էր նրանց առաքինութեան կատարեալ վարքի և աստուածեղէն իմաստութեան մէջ:

Մաշտոցն երկար չէ մնում անապատում: Աշխարհի աղմուկներից հեռու, անվրդով իջեանի մէջ իր կենսական ոգիքը ժողովելով, իր հոգեկան բոլոր ձգտումները, գաղափարները մարմնաւորելով, իր ապագայի գործունէութեան ճամբան հարթելով ու համակամակից ընկերներ պատրաստելուց յետով, երբ լսում է Սահակ Պարթևի գործերը, թողնում է անապատական կեանքը, թարմ ուժերով, գործունէութեան եռանգով զինւորուած՝ գալիս է յողջոյն սուրբ Կաթողիկոսին, որ իր մտերիմն ու սիրելին էր գեռ մանկութեան հասակից. այն ժամանակից, երբ Մաշտոցը նոտար էր Սահակի հօրներսէս մեծի մօտ: Հայրապետից հրաման առնելով, այս ու այն կողմն է շրջում Մաշտոցն իր ընկերների հետ Քրիս-Ռետն + Յուղ-Ռի-Ներ անելու, ուղիղ վարքի ու բարքի ճանապարհը ամենին ցոյց տալու, աւետարանական սէրն ու եղբայրութիւնն ամենքին ուսուցանելու:

Հայաստան աշխարհի համար ամենքին լոյս տւող մի նշուլագեղ արփի, ճշմարիտ հաւատի

հաստատութեան սիւն և ամեն հասակի համար առաքինութիւնների ցանկալի օրինակ դարձաւ նա-Մաշտոցը:

Փ.



աշտոցն սկսեց իր գործը: Առաջին անգամ քարոզ դուրս եկաւ 396 թ. Գողթան գաւառին: Տրդատ թագաւորի օրերից դեռ այդ տեղ հեթանոսական աղանդ կար, որն աւելի յալտնուեց Արշակունեաց հարստութեան վատթարելու ժամանակ: Գաւառի Շաբիթ անունով իշխանի օգնականութեամբ բոլորովին մաշեց այդ աղանդը: Իր աշակերտների գործակցութեամբ ձեռք առաւ քարոզել, խրատել ու սովորացնել քրիստոնէական աւետարանը և ալսպիսով սատանայական դիւապաշտ մոլորութիւններից տղատելով՝ բերեց նրանց ի հնազանդութիւն Քրիստոսի:

Կորիւնի և Խորենացու ասելով այս տեղերում աստուածային նշաններ էին երևում, ինչպէս Գրիգոր Լուսաւորչի ժամանակ: Սոյն-

պիսի կերպով վարվեց նաև Սիւնեաց աշխարհում այնտեղի իշխան Աղթինակի օգնականութեամբ:

Թէև դեռ Գրիգոր Լուսաւորչի օրերից աստուածաշտութեան լոյսը ծաւալուել էր արդէն Հայաստան աշխարհում, սակայն՝ հայերէն դպրութեան ըստ լինելու պատճառով՝ ժողովուրդը չէր ընտելացած աստուածային խօսքերը լսելու մէջ, որովհետեւ եկեղեցիներում Աստուածաշունչը կարդացվում էր ասորի կամ յոյն լեզուներով, որո՞ւք մատչելի էին միայն գիտեցուներին և ոչ ռամիկ գասակարգին: Այս պատճառով էլ թէպէտ Մաշտոցն ամեն տեղ կարդում էր Սուրբ Գիրքը, թարգմանում ու մեկնում ժողովրդին, սակայն ինքը միայն լինելով, շատ դժուարութիւնների էր պատահում: Շատ անգամ անհամար ժողովրդի պահանջները, իր քաշած չարչարանքների փախարէն մարք, իր քաշած չարչարանքների տեսնելով, սաստիկ տուցած չնչին արդիւնքը տեսնելով, սաստիկ էր քաշում, ազօթք անում, որ Տէր Աստուածն այց տոնի ազգին—միջոց տալ նրանց գրաւոր կարօտութիւնը լցնելու: Այս իսկ պատճառով անգամար մտածում էր, հնարք էր որոնում, շատ անգամ էլ մշանչենամուռնչ ազօթքի էր դիմում, բազկատարած պաղատան-

քով, արտասուալից աչքերով դէպի Աստուած էր դառնում և առաքելական խօսքը կրկնում. «տրտմութիւն և անպակաս ցաւ է իմ սրտին, որ ազգականներս ու եղբայրներս մնում են դպրութիւնից անդէտ ու գրքերի մխիթարութիւնից զրկուած»:

Եւ շատ օրեր տատանելով այն մտքով թէ արդեօք ի՞նչ ելք գտնի այս բանին, զանազան փորձեր արեց նշանագրեր գտնելու համար, բայց և ամենն էլ անօգուտ եղան. «այս պատճառով, ինչպէս ասում է Ղազար Փարպեցին, շատ մտածելով տրտմում էր երանելի Մաշտոցը, մանաւանդ տեսնելով Հայաստան աշխարհի մանուկների այն մեծամեծ ծախսերը, որոնք վատնվում էին հեռագնաց ճանապարհների ու մեծ թոշակների վրա, և իրենք էլ երկար ժամանակ դեգերումով մաշում էին իրենց օրերն ասորի գալրոցների մէջ և շահվում էին շատ քիչ: Բացի այս նաև հայոց եկեղեցիների մէջ պաշտօններն ու ընթերցմունքն ասորի ուսումով էին կատարում, որից ոչինչ չէին կարողանում հասկանալ ու սովորել այսպիսի մեծ աշխարհի ժողովուրդը: Աբքունիքն էլ պակաս նեղութեան մէջ չէր, քանի որ այնտեղի գրութիւններն էլ օտար լեզուներով էին

լինում—մանաւանդ պարսիկ լեզով։»

Վերջապէս շատ մտածելուց ու հոգատարելուց յետոյ, Ս. Մաշտոցը դիմում է Սահակ Հայրապետին ու պատմելով նրան իր խորհուրդը, գտնում է նրան իրենից աւելի փափագող այդ բանին, բոլորովին համակամ ու գործակից իր հետ։ Երկուուր միասին իրենց ընդդակից աշակերտների հետ շատ չարչարուելուց, շատ փորձեր փորձելուց յետոյ, վճռում են դիմել հաւաքական ուժերի-ժողովի։

Ե.



աղարշապատ քաղաքում, Կ02 ժւին,
Մեծն Սահակ Հայրապետը Ս. Մաշտոցի լորդորանքով մի մեծ ժողով է կազմում գիտնական եպիսկոպոսներից ու վարդապետներից բաղկացած, և խորհուրդ են անում Հայկական նշանագրեր հնարելու համար։ Այս բանի մասին իմաց են տալիս և հայոց թագաւոր Վ. Ռուամշապուհին, որ և այդ մեծ ժողովին գալով ներկայ գտնուելու և իմանալով գործի հանգամանքը, լայտնում է, որ ինքը տեղեկացած

է մի Հաբէլ անունով քահանայից թէ ասորի եպիսկոպոս Դանիէլի մօտ գտնվում են Հայոց լեզուի հին նշանագրերը։ Ժողովականները, երբ լսեցին այս բանը, թախանձեցին թագաւորին հոգս տանել դրա համար։ Վռամշապուհն ուղարկում է Վահրիճ Խաղունի պատուական ու հաւատարիմ, նոյն բանին ջերմ փափագող մարդին Հաբէլի մօտ։ Սա էլ Վահրիճի հետ միասին իսկոյն դիմելով Դանիէլ եպիսկոպոսին, ստանում են նրանից այն նշանագրերը, բերում տալիս են Սահակ ու Մեսրպին։ Սրանից յետոյ երանալի հոգաբարձուները մատաղ երեխաններ են խնդրում թագաւորից Դանիէլեան այս նշանագրերը սովորացնելու համար։ Հրաման արձակեց թագաւորը կըթել նրանցով ամեն տեղ Մաշտոցի վերակացութեամբ ու վարժապետութեամբ։ Այն ժամանակ Մեծն Սահակ տուեց Մաշտոցին վարդապետութեան աստիճան և ամենալն հայոց մեծ բարուն (մեսը ոպ) լայտարարեց։

Երկու տարու չափ աշխատելուց յետոյ, դրականապէս համոզուեցին, որ Դանիէլեան նշանագրերը համապատասխան չեն հայոց լեզուի հարուստ հնչմունքներին, վանկերին ու կապերին։ Այս պատճառով նորից սկսում են

նուիրուել հոգսերի-աշխատել գտնել ցանկացածները:

Սրանից յետոյ աշխատութիւն է յանձն առնում ս. Մեսրոպ վարդապետն անձամբ երթալ Դանիէլ եպիսկոպոսի մօտ, որ գուցէ աւելի քան տեղեկանայ: Այս նպատակով իր ձեռնասուն աշակերտներից մի գաս վերցնելով, թագաւորի հրամանով և սուրբ Սահակի հաւանութեամբ գնում է Միջազետ, հանդիպում է Դանիէլին, սակայն ոչինչ աւելի չի տեղեկանում քան թէ գիտէր: Ուստի վարանմունքի մէջ մնալով այս ու այն ասորի ու յոյն եպիսկոպոսին է դիմում, որ գուցէ տան իրեն մի ճարտար ու գրագիտութեան մէջ լաջողակ մարդ իր փափագը լցնելու համար: Գնում է արդ տեղից Եղեսիայի Բարեկոս, Ամժայի Ակակիոս եպիսկոպոսների մօտ, որոնցից ևս ոչինչ օգնութիւն չէ գտնում, թէպէտ շատ սիրով ու մեծարանքով ընդունվում: Տեսնելով, որ զուր տեղը ժամանակ է կորչում, իր հետ բերած աշակերտներին երկու մասի է բաժանում և Միջազետի յոյն ու ասորի դպրոցներն է տալիս:

Եղեսիայում մի երեւելի ճեմարան կար, որի կառավարիչն ու վարժապետն էր այն ժամանակ Պղատոն անունով ճարտասան ու անուա-

նի մարդ: Մրա մօտ եկաւ Ս. Մեսրոպը և սրան էլ յայտնեց իր փափագը: Հոետուրը երկար ժամանակ շարչարուելուց, շատ փորձեր անելուց յետոյ, խօստովանելով իր տգիտութիւնը, պատմեց և եսրոպին, թէ ինձանից առաջ այս գիւանիս մէջ կար մի մեծանուն վարդապետ Եպիփանոս անունով, որ այժմ առանձնացած է անապատի մէջ. Նրան որոնելով գտնես, գուցէ նա լցնի քո փափագը:

Այս լսելով Մեսրոպը դարձեալ եկաւ Եղեսիա Բաբելոս եպիսկոպոսի մօտ, որից տեղեկացաւ, որ այն Եպիփանոս իմաստահերը մեռել է քանի մի օր առաջ. սակայն կայ նրա աշակերտ Հոռովանոսը, որ նստում է Սամուստի մէջ ու յայտնի է հելլեն գրչութեան մէջ իր հրաշալի արուեստով:

Զը դանդաղեց Ս. Մեսրոպ մի քանի աշակերտների հետ գնալ Սամուստի, ուր մեծարանքով ընդունվելով՝ գտաւ Հոռովանոսին: Սակայն սրանից էլ անշահ մնալով բոլորովին յոյսը կտրեց մարդկային օգնականութիւնից և Ս.ստուծոյ ապահնելով ինքն իրեն՝ իր ոռվորական աղօթքն ու խնդրուածքը, տքնութիւնն, արտաստուալից պաղատանքն ու խըստամբերութիւնը ձեռք առաւ:

Իր ազգի ու աշխարհի քարեաց համար անքուն աշխատութիւնների, անդադրում աղօթք-ների և անընդհատ մտածմունքների տալով իր անձը՝ վերջապէս արժանի է լինում Վերին Շնորհացը ստանալով իր ինդրածն աւելի քան թէ խնդրում էր Մեսրոպը:

Փրկչական 406 թւի նոյեմբեր ամսի 2-ին էր: Հայոց մեծ վարդապետ սուրբ Մեսրոպը ծունկ խոնարհած, արդարագործ ձեռքերը դէպի երկինք, դէպի Աստուած վեր ուղղած աղօթում էր ու մտածում, Աստուծոյ օգնութիւնն էր հայցում և միւնոյն ժամանակ իր աչքերն էլ անիմանալի կերպով միացած հոգու ստեղծագործող բոլոր զօրութիւնների հետ միասին՝ լարուած ուշիմութեամբ՝ իր փափագածը գտնելու փորձերն էր կրկնում կարծես: Եւ ճշմարիտ որ, Մեսրոպն այնքան անձնատուր էր եղած հայոց նշանագրերը գտնելու մտքին, այնքան մտածում էր, այնքան անխոնջ կերպով փորձեր անում, որ նրա աչքերն ամեն տեղ՝ դըրսելու թէ տանը, ամեն ժամանակ՝ արթնութեան թէ քնի մէջ, աղօթքի թէ խօսակցելու միջոցում հայոց նշանագրերն էին որոնում: Եւ աշա Մեսրոպի յափշտակուած հոգով մտայածութիւնը ստուածեղէն լուսով յան-

կարծ պալձառակերպվում է:— Նա շնորհ է ստանում իրենից մի նոր ու սքանչելի ծնունդ ծնանելու: Պատմագրի ասելով, «ոչ քնի երազի և ոչ արթնութեան մէջ տեսիլք է տեսնում, որ իր սրտի գործարանի վրա հոգոյ աջ ձեռքը երևելով՝ գրում է հայոց նշանագրերը: Այս բանը ոչ թէ երեաց միայն, իբրև տախտակի վրա նկարուած, այլ բոլորը հանգամանօրէն հաւաքուեց նրա մտքի մէջ և աղօթքից սթափուելով Ս. Մեսրոպը ստեղծեց մեր նշանագրերը Հռուփանոսի աջակցութեամբ գեղեցիկ ձեւակերպելով և յունական ալփաբետի օրինակով գասաւորելով. այսպէս և տառագարձութեան և՛ քերականութեան և՛ քերթողական արուեստի բոլոր կանոնները:»

Սրանից յետոյ իսկոյն պատուէր է ուղարկում իր մօտակայ աշակերտներին գալ շուտով իր մօտ ժողովգել: Իսկ ինքը, ինչպէս ոգով ծարաւած զովացուցիչ աղբիւր որոնելով ու գտնելով, իսկոյն և եթ ձեռք է առնում իր մօտ եղած երկու հասուն աշակերտի հետ միասին (Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի) Աստուածաշունչ զբքի թարգմանութիւնը սկսելով Սողոմոնի առակներից և նոր Կտակարանն, որ այնքան կարեոր էին աշա-

կերտներին դպրութեան մէջ հրահանգելու
համար:

Ս. Մեսրոպի Աամուսատ քաղաքում մնա-
լու ու թարգմանութեամբ պարապելու գլխա-
ւոր պատճառն այն էր, որ Դեկտեմբերի ժա-
մանելովն արդէն սկսուած էին ձմերային եղա-
նակները, ուրեմն և անշարժար ճանապարհոր-
դութեան համար:

Զ.

 Էպէտ և Ս. Մեսրոպի սիրտը լցուած
անպատում ցնծութեամբ, սաստիկ
բարախում էր Հայաստան թռչելու, Սահակ
Մեծի, Վաստմշապուհ թագաւորի և բոլոր ժո-
ղովրդի առաջ իր ուրախութիւնը մերկանալու.
սակայն ձմերային օրերը պատնէշ կանգնեցին
այդ բաղձանքի գէմ... Բայց և այնպէս, ինչ-
պէս ասացինք, պարապ չանցրեց այդ ժամա-
նակը. նա ձեւնամուխ եղաւ Սուրբ Գրքի թարգ-
մանութեանը, որ նրա սրտի փափազն ու քա-
շած տանջանքների նպատակն էր կազմում:
Անցան ամիսներ: Կ07 թւի գարնանամտի
օրերումն էր: Մի մեծ շարժում կար արքայա

նիստ Վաղարշապատի մէջ: Հայոց զօրական-
ները, զօրավարներն ու իշխանները Վահակ Հայրա-
պետը եկեղեցական բոլոր ուխտի հետ, ան-
համար ժողովրդեան բազմութեամբ շրջապա-
տուած, աշխարհական ու հոգեւորական հան-
գիսով՝ յառաջ էին շարժում դէպի Մահ գետը:

Թագաւորից սկսած մինչև յետին ռամիկը,
կաթուղիկոսից սկսած մինչև Ժամկոչը-ամենքն
էլ մի անպատճելի ուրախութեան մէջ էին.
ամենքն էլ աճապարում էին Հայ Մովսէսին
ընդառաջելու, Հայոց հրեշտակին դիմաւորե-
լու: Այդ օրը Վաղարշապատ էր մտնելու Սուրբ
Մեսրոպը, որ աւելի էր զուարձանում բերելով
իր հետ Հայոց նշանագրերը, քան թէ Մով-
սէսը Սինէական սարից աստուածային պա-
տուիրանքների տախտակները բերելով, որով-
հետև Մովսէսը գտաւ իր ժողովրդին ուխ-
տագրուժ, իսկ Մեսրոպն ընդհակառակը հան-
գիպում է լիաշուրբժն ու ցնծալիր ուրախու-
թեան իր ամբողջ ժողովրդի կողմից:

Վերադառնալով գարձեալ նոյն իր դնացած
ճանապարհով, ալցելելով նոյն իր ծանօթ և-
պիսկոպոսներին, ցոյց տալով ու պատմելով
աստուածանորհ մեծ գիւտը և ամենքից մե-

ծարանքով շատացած՝ գալիս հասնում է Վաղարշապատ քաղաքին։ Ուահ գետի մօտ ուրախութեան արցունք աչքներին ընդունում են Մեսրոպին հայոց թագաւորն ու Հայրապետը, հայոց իշխաններն ու զօրապետները, եկեղեցու բոլոր ուխտն ու ժողովուրդը։ Եւ լսելով աստուածառաք հայ Մովսէսից բոլոր մանրամասնութիւնները, տեսնելով նշանագրերը, հայկական տառերով ու բարբառով գրուած թարգմանութիւնները՝ անչափ բերկրութեամբ լրցուեց սրտները և՝ ցնծութեան բացականչութիւններով, հոգևոր երգերով՝ քաղաք էին բերում հայոց մեծ վարդապետ և առաջին թարգմանիչ սուրբ Մեսրոպին։

Այդ օրը տօնական ուրախութեամբ անցըն բոլոր հայերը. և այդ փառաւոր ազգային ու եկեղեցական տօնախմբութիւնը շարունակում է հայոց եկեղեցին մինչև ալսօր։

Եւ արգարեւ, հայի համար տօնակատարութեան օր է այդ օրը։ Հայոց տառերի գիւտով մի նոր ու խորհրդաւոր գարագլուխ սկսուեց Հայաստանի համար։ Եւ մի՛թէ կայ դրանից աւելի սուրբ, տօնելու աւելի արժանի օր-հայերիս համար— ազգայն տօների մէջ...

Ա. և այնուհետև արքունի հրամանով ժողովում են մանուկներ, բացվում են պարսից մասնի Հայաստանի բոլոր գաւառներում դպրոցներ, ուր առաջին անգամ աւանդվել է սկսվում մայրենի լեզուն հարազատ տառերով։ Ինչքան որ հայիմաստ, բայց յոյն, ասորի ու պարսիկ տառերով գրուածներ կային՝ փոխվում են բոլորը հայ տառերի, որով և մեր աշխարհը հարստանում է բաւական հոգեշահ գրքերով։ Այս ամենով հայ ժողովրդի սրտի մէջ այնպիսի մի փափառ է ծնում գէպի մայրենի լեզուի ուսումը, որ ամեն մարդ ցանկանում է թէինքը և թէ իր որդիքը հայոց լեզուի աշակերտութեանը գրուեն։ Սոյն այս ժամանակներում աշխատում են Յունաց բաժնում ևս հայկական գալուցներ բանալ. սակայն չէ յաջողվում, որովհեաւ Թէոդոս Փոքրի թագաւորելու ժամանակ յոյներն այդ բաժինն առնում են հայոց թագաւորի ձեռքից ու յանձնում են իրենց վերակացուներին։ Սրանք ելթով չէին տալի Մեսրոպին այնտեղ հայկական գլուխութիւն ուսուցանելու։

Հայոց տառեր գտնողի հոչակը տարածվում է և՝ հարեան ազգերի մէջ, որոնցից Վրաստանն ու Աղուանները ո. Մեսրոպի հանճարին են դիմում, իրենց ազգերի համար ևս լատուկ նշանագրեր հայցելով:

Մարդասէր Մեսրոպն անուշադիր չ' մնում այդ սրտագին խնդիրներին, մանաւանդ որ հայոց լեզուի հարուստ հնչիւնների համար նշաններ գտնողի առաջ՝ ոչինչ դժուարութիւն չեր մնալ վրաց և աղուան լեզուներին համապատասխան նշաններ յօրինելու վերաբերութեամբ։ Ա. Մեսրոպն առնում է իր հետ Զաղալ անունով մի թարգման ու մի քանի աշակերտների հետ գնում է Վրաստան, ուր կարճ միջոցում ուսումնասիրելով վրաց լեզուի հնչումները, նրանց համար ևս ստեղծում է նշանագրեր 410 թւին, Բակուր իշխանի և Մովսէս կաթուղիկոսի օրերում։ Նրանց աջակցութեամբ բաց է անում դպրոցներ, ժողովում է մանուկներ և ուսուցիչ թողնելով այնտեղ իր աշակերտներից՝ Խորենացի Տիրարին ու Տարօնեցի Մուշէին վերագառնում է Հայրենիք։

Հայաստան դառնալով Ա. Մեսրոպը գտնուամ է Մեծն Սահակ հայրապետին Աստուածաշունչ

գրքի թարգմանութեամբ պարապելիս, որին աճապարում է աշակցել և ինքը Ալո ժամանակին, ինչպէս գրում է պատմութիւնը, հայոց ցանկալի աշխարհը անպայման սքանչանքի մէջ էր։ Մեսրոպ ու Սահակ համաշունչ ընտրելակիցների բերանով Քրիստոսի աշխարհակեցոյց Աւետարանը հայտարբառ խօսում էր ամեն տեղ։ Հայոց աշխարհի ժողովուրդն ամեն կողմերից ու գաւառներից ջերմեռանդութեամբ լցուած՝ շտապում էր դէպի աստուածային գիտութեանց աղբիւրը—դէպի Արարատեան գաւառը։ Ճշմարտութեան աշակերտվածներից Ա. Մեսրոպն ու Ա. Սահակն անաշառ խստութեամբ ընտրում են կատարելութեան հասաներին և իրաւունք են տալիս վարդապետելու և քարոզելու։

423 թւին Մեսրոպը գալիս է Աղուանից աշխարհը Արսվաղէն թագաւորի և Երեմիա եպիսկոպոսապետի մօտ, նրանց խնդրին ևս բաւականութիւն տալու։ Կանչելով իր մօտ Բենամին անունով շնորհաւոր թարգմանին, ուսումնասիրում է աղուան լեզուի հնչումները և հնաբում է նրան համապատշաճ նշանագրեր։ Այստեղ ևս մանուկներ ժողովելով՝ բաց է անում դպրոցներ աղուան լեզուն ուսուցա-

նելու։ Ինքը երկար ժամանակ չէ մնում այդտեղ, այլ կարգելով իր աշակերտներից՝ Ենովքին, Դանանին, Յովնաթանին ուսուցիչներ, ինքը գալիս է Հայաստան։

Այսպէս մեր սահմանակից ազգերին ևս մեծ բարեաց պատճառ, ազգային դպրութեան ծնընդաբերող հանդիսանալով՝ արժանանում է և նրանց անմոռաց լիշտակին։

¶.



Ծիստոնէական լուսով Հայաստանին լուսաւորելու համար գիշեր ցերեկ հոգատարող մշակը, չը բաւականացած կատարածներից, հաւանութիւն է ստանում աշխատութիւններն արդիւնաւէտ կացուցանելու համար մտաւոր յառաջադիմութեան մեծ գործը երկու մասը բաժանել. Արարատեան գաւառում քարոզչութեան և ուսումնական կրթութեան պաշտօնը թողնել Ա. Սահակի վրա, իսկ միւս գաւառներում ինքը՝ Մեսրոպը սերմանէ աւետարանական ճշմարտութեան և կրթական լուսաւորութեան սերմերը։

Եւ այսպէս, առնելով հետն իր աշակերտներից մի քանիսին, գնում է իր առաջին դաստակերտ Գողթան գաւառը, ուր որ ամենից առաջ քարոզել էր կենաց բանը։ Այստեղ իր սովորական գիւղըմբոնելի քարոզութիւններով մարդավայել վսեմ ճանապարհն է ցոյց տալի ամենքին և յորդորելով վառում բորբոքում է Քրիստոսի, եղբօր և ազգի սիրով։

Յետոյ անցնում է հարևան Սիւնեաց աշխարհը, ուր որ տեղ կալին վայրենագոյն խարհը, ուր որ տեղ կալին վայրենագոյն խարհը։ Ժողովում է մանուկներ ու դարձակիչներ։ Ժողովում է մանուկներ ու դարձակաբար սնուցանելով ու դաստիարակելով, նրանցից, այդ վայրենիներից շատերին մինչեւ անգամ եպիսկոպոսութեան արժանի մարդիկ է դարձնում։ Հոգեւից վարդապետ Մեսրոպի բերանից բղխած հոգու շնորհը բոլորովին ուրիշ մարդ էր դարձնում նրան աշակերտողներին. որովհետև նա չէ թէ լոկ քարոզում էր, այլ, կարծես, ինքն իր մէջ ամփոփելով աւետարանը, իր շնչի, իր կենդանի խօսքերի միջոցով կրկին վերաստեղծելով՝ ներս էր մուծանում լսողների սրտի մէջ։ Միւնոյն գործերը կատարում էր Վրաց աշխարհի մերձակայ գաւառներում ևս, ուր որ եպիսկոպոս կարգեց իր աշակերտներից Կորիւնին։

Ալս բոլորից յետոյ կըկին վերադառնում է սուրբ Մեսրոպը և պատահելով Ս. Աահակ Հալրապետին մի առ մի պատմում է իր կատարածները։ Սակայն գործասէր Մեսրոպն Երկար չէ կարողանում մնալ այդ տեղ։ Նա դարձեալ դուրս է գալի շրջագալելու, իր կարգած վերակացուներին այցելելով քաջալերելու և խրախուսելու, բարբարոս, հեթանոս ու վալրենի, բայց կարճ ժամանակում քաղցրաբարոյ ու ճշմարիտ քրիստոնեալ գարձրած ժողովրդին՝ Հայրական միջիթարութիւններով։ իր սավորեցրածը, իր աւանդածը նորելով՝ վերապնդելու։

Ա. Հա ալսպիսի անդուլ աշխատութիւններով երբ Հայ առաքեալ Ս. Մեսրոպն ամեն տեղ և ամենքի առաջ Առտուծոյ պատգամները, եղբօր և ազգի սէրը Հայ բարբառով, հայ գրելով սփռեց տարածեց, երբ մալրենի լեզուի ուսումը ամեն մի Հայ մարդի Համար անհրաժեշտ կարիք, ցանկալի պահանջ գարձրեց, երբ իր վերակացութեանը յանձնուած կողմերը Քրիստոսի Աւետարանի խաղաղ ոգու տիրապետութեանը չպատակագրեց, գարձաւ եկաւ Ս. Աահակ կոթուղիկոսի մօտ Յունահայոց բաժնի մասին խորհրդակցելու, որ ենթարկուած լի-

նելով Կեսարիաի լոյն եպիսկոպոսի, առաջնորդութեանը, չէր յօժարում սա թովլ տալ Մեսրոպին այն բաժնում եղած Հայերին Հայ գալրութիւնը սովորացնելու։

Տեսնելով որ ոչ մի հնարքով չեն կարողանում Համոզել Յունահայքի վերակացուներին, Ս. Աահակ Պարթևը խորհրդակցելով մի քանի նախարարների հետ, որոշում է Ս. Մեսրոպին աշակերտների ու Վարդան Մամիկոնեանի հետ ուղղակի կոստանդնուպոլիս Կայսր Թէոդոս Փոքրի մօտ ուղարկել, տալով պատշաճաւոր գրութիւններ թէ կայսեր թէ Ատամիս պատրիարքի և թէ Յունաց արևելեան գօրավար Անատոլիոսի անուններով։

 Մեսրոպը 420 թւին իր աշակերտների ու Մամիկոնեան Վարդանի հետ ճանապարհ է ընկնում դէպի կոստանդնուպոլիս։ Հասնելով Մելիտինէ (Մալաթիա) քաղաքը, տալիս է Ս. Աահակի թուղթը Անատոլիոս զօրա-

վարին, որը սիրով ու մեծարանքով նրանց
ընդունելուց յետով, իմաց է անում կայսեր
սրանց գալուստը և խնդիրը. ինքն էլ իր կող-
մից աղաջում է նրա գթութիւնը որանց սի-
րով ընդունելու; Մի քանի ժամանակից յե-
տով Անատոլիոս կայսրից հրաման ստանալով՝
համոզում է Մեսրոպին թողնել Մելիսինէի
Ակակայ եպիսկոպոսի մօտ հետը բերած աշա-
կերտնելին և յետով Բերջանու Գինթ անու-
նով հայացն եպիսկոպոսին յանձնելով Ս. Մես-
րոպին ու Վարդանին, փառքով ու պատով
ուղարկում է Կոստանդնուպոլիս:

Քաղաքը հասնելով, ներկայանում է կայ-
սեր ու պատրիարքին: Տալիս է նրանց Ս. Սա-
հակի թղթերը ու պատմում ամեն բան, ըս-
կըսած տառերի գիւտից մինչև իրենց դնալու
նպատակը: Բացի այս, որ մեծարանքով են
ընդունում Ս. Մեսրոպին, որի համբաւն ար-
դէն լսել էին, այլ և կատարում են նորա ու
Ս. Սահակի բոլոր խնդիրները: Կայսրը և թէ
պատրիարքը հրովարտակներ ու հրամաններ
են ուղարկում Անատոլիոսին, միւս լոյն վե-
րակացուներին ու Հոգևորականներին: թոյլ
տալ ամեն աեղերում համարձակ քարոզել և
Յունահակի ամեն գաւառների մէջ հայոց

լեզուի դպրոցներ բանալ: Հրաման է արձա-
կում կայսրը վայելուչ մեծարանքով Ս. Մես-
րոպին ակո—մա անուանել: ըստ յունաց ակ մ-
դիւ, որ նշանակում է աննինջ աքնող, կամ
զերզգօն վարդապետ. իսկ Ա. տափկոս պատրի-
արքը Ս. Մեսրոպին անուանում է Եկեղիւն-
ութիւն (բարունապետ), որ պատուի անուն է
Եկեղեցական ուսման մէջ կատարեալ լինելու
նշանակ:

Այս ամենից յետով Ս. Մեսրոպը խնդրում
է պատրիարքից տալ իրեն Ա. տափուածաշնչի
ուղղագիր ու Ճշմարտաբան մի օրինակ — ժարգ-
մանութեան համար: Նա էլ խոստանում է
գտնել և ուղարկել: Զատիկը Կոստանդնուպոլ-
սում անցնելուց յետով, Ս. Մեսրոպը Վարդա-
նի հետ միասին մեծ պատով և արքայա-
տուր կառքով վերադառնում է դէպի Հայա-
տան, բերելով հետը Կայսրից ու պատրիարքից
թղթեր Ս. Սահակի անունով:

Մելիսինէ քաղաքը գալով, Ս. Մեսրոպը
չէ գտնում Անատոլիոսին, որովհետև նա կայ-
սեր հրովարտակն արգէն ստացած լինելով՝
գնացել էր Յունահակիքի Կողմերը և այնտեղ
սպասում էր Ս. Մեսրոպին: Այս գերջինս առ-
նելով իր հետ Մելիսինէաւմ թողած աշակերտ-

ներին՝ գալիս է Հայաստան և Ա. Սահակին
ու Անատոլիասին լայտնում ամեն բան:

Սրանից յետոյ հրաման է արձակվում
Յունահայքի ամեն տեղերից մանուկներ ժո-
ղովել, դպրոցներ բանալ և հայ դպրութիւնն
աւանդել: Դպրոցները կարգի բերելով, նշա-
նակում է իր աշակերտներից վերակացուներ.
իսկ ինքը-Ա. Մեսրոպը գործ է գնում իր սո-
վորական վարդապետութիւնը ժողովվածների
լսելիքը քաղցրացնելով:

Երանելին Մեսրոպ ձեռնամուխ է լինում
և բարբարիանոս (բորբոքիտոն) դժպատեհ ու
կամակոր աղանդը քննելու և՝ այդ աղանդա-
ւորներին ուղղելու ոչ մի միջոց չգտնելով,
աշխարհական ատենու ձեռընտութեանն է
դիմում, ամենքին խայտառակութեամբ հա-
լածական անում աշխարհից:

Փ.

 ատարելապէս հասկանալով կեանքի
խորհուրդը, քաջապէս գնահատելով
կեանքիժամերն ուրութէները, զգալով, որ իւրա-
քանչիւր մի վայրկեանի սահելով մօտենում է

կեանքի սահմանը, ճգնում էր Ա. Մեսրոպ ոչ
չի վայրկեանն էլ պարապ և անխորհուրդ
շանցնելու: Նա մի աշխատանք վճարելով սկը-
սում էր միւսը, մի վաստակից անցնում էր միւ-
սին: Նրա կեանքը մի գործօն հայրենաստիքի
պարզ հայելի է մեր առաջ:

Յունաբաժնում դպրոցների գործը կարգի
բերելուց յետոյ, նոյն տեղում շատ շնորհա-
գիր գրքեր ձեռք բերելով, սկսում է այդ ամենը
թարգմանելով ծովայնել վարդապետութեան
խորութիւնը հայաստանում: Բացի թարգմա-
նութիւններից, նա գըում է «բայհարէնի ճո-
խան», ոչ-բայհարէնի «Նորհանիք» ճա-
ռեր, նիւթ ընտրելով մարգարէական գլքե-
րից, ճառեր՝ աւետարանական ճշմարիտ հա-
ւատի ամեն ճաշակով լի: Բացի այս ճառերից
Ա. Մեսրոպը կարգաւորեց ու լորինեց եկեղե-
ցական պաշտամունքների ժիշտարանը, որ և նրա
առաջին անունով «Մալուց» է անուանում:

Այսպէս թարգմանիչ Մեսրոպը կեանքի
բոլոր ժամանակն անցնելով ճանապարհոր-
դութեան մէջ հայոց, վրաց և աղուանից կող-
մերում, գեշեր ցերեկ անվեհեր ու անդադար
սերմանում էր աւետարանական սուրբ ալղես-
տանի սերմը-ամեն տեղ՝ թէ թագաւորական

պալատներում թէ իշխանական ապարանքներում և թէ գեղջկական մըստ հիւղի մէջ թագաւորների ու իշխանների, հեթանոսների ու հակառակորդների առաջ: Նա իր հոգեցունչ լորդորներով ամեն ողի վառում էր հոգեորդութեամբ, բռնակալների ձեռքում տանջվածների համար թողութիւն և ազատութիւն էր ստանում, սգաւորների մէջ միսիթարութեան լոյս էր փալլեցնում:

Քրտնաջան Մեսրոպը նկատելով, որ հայոց աշխարհի քաղաքական ամրութիւնը խախտուած է, որ հայոց անձնադիր հովվապետ Ա. Սահակի Տիգբոնի բանտն աքսոր գնալով հայրապետական աթոռը չարալեզու երէց չերէց Արծկեցի Առւրմակի, Իրքիշու ու Շմուէլ ասորիներին էր մնացել, սիրտը գառնութեամբ լցրած՝ հեռուից միայն էր թեածում իր անհովիւ հօտին, մի և նոյն ժամանակ և միշտ լորդորելով հայոց իշխաններին ու եկեղեցու ուխտին լաջողեցնում է վերջապէս Ա. Սահակին բանտից ազատելու և կրկին Հայաստան դարձնելու մեծ գործը:

Ա. Մեսրոպը ակնյանդիման տեսնելով հայոց վիճակը, իր սրատես աչքերով թափանցեց այն ամեն ձախող դժբաղտութիւններն ու հալա-

ծանքները, որոնք տեղի պիտի ունենալին հայերի վրա. Նա ձեռնամուխ եղաւ շեն ու անշեն տեղերում, դաշտերում ու անապատներում, մանաւանդ լեռնագաւառներում վանքեր ու մենաստաններ շինելու և այս ամենի մէջ անհամար վանականներ ժողովելու: Այս վանքերն ու մենաստաններն էին, որ իրեւքրիստոնէական գաստիարակութեան, ուսման ու գիտութեան օթևաններ հանդիսացած՝ հայկական գիտութիւններին և ուսմանը փոթորկալից դարերում, Հայաստանի քաղաքական ինքնուրենութեան նաւաբեկութեան ժամանակներում ասպնջական էին լինում, պատրսպարանք էին դառնում: Այս վանքերն ու մենաստաններն էին, որ իրենց ամրութիւնների մէջ հազարաոր հայերի կեանք են ազատել սրի ու թրի, կրակի ու տասնաւոր անգթութիւնների երեսից: Այս վանքերն ու մենաստաններն են նաև, որ այսօր լոիկ ու մնջիկ կերպով կանգուն վկալ են հայի պատմական անցեալի...

«Այնտեղ, վանքերի ու մենաստանների մէջ գրում է Կորիւնաբբենում էին ոչ թէ դինով, այլ հոգով, իրենց սիրտը հոգեսր երգերով էին պատրաստում ի փառս և ի փառա-

բանութիւն Աստուծոյ: Այստեղ էր կը թու-
թիւնը հոգեպատում գրքերի քաղցրուսոյց
ընթերցմունքների, քաջալերութիւնը յորդո-
րական վարդապետութեան. այստեղ եռուժ
էին հոգիներն աստուածահաճոյ ծառայու-
թեամբ, վեր էին ուղղվում ամենքի կեանքի
համար ազերսալից ազօթքներ ու խնդրուած-
ներ: »Այսպիսի տեղերում էր անցնում եր-
բեմն և ինքը Ս. Մեսրոպն իր կեանքի օրե-
րը: Ամեն անգամ երբ կարիքը, երբ պէտքն
օգնութեան էին կանչում նրան, անյապաղ
դուրս էր գալիս իր աջակիցներով թիկունք
լինելու պատահած գէպքերում և ամեն ան-
գամ էլ գործին յաջող աւարտ տալով՝ «ան-
փակ բերանով ու պարարտ ոճով բղխեցնում էր
լսողների սրտի մէջ իր վարդապետութեան
վտակները»:

Թարգմանիչները 432 թւին Կոստանդնու-
պոլսից վերադառնալով՝ բերում են Աստուա-
ծաշունչ գրքի ստուգագիր օրինակը, որ և
ձեռք են առնում Ս. Սահակն ու Ս. Մես-
րոպը նորից թարգմանելու: Սակայն մի քա-
նի գժուար բառերի ու գժուար բացատրելի
բաների պատահելով՝ տեղ տեղ թերութիւն-
ներ են մնում: Ուստի ճիշտ թարգմանելու

համար աշակերտներ են ուզարկում Սզեքսանդ-
րիա և Աթէնք յուն լեզուի մէջ կատարելապէս
հմտանալու, որ յետոյ թէ լցնեն թարգմա-
նութեան թերութիւնները թէ այլ կարևոր
գրքեր թարգմանեն հայ լեզուվ և թէ վեր-
ջապէս հայոց գրականութիւնը ծաղկեցնեն,
հայի մտաւոր այգեստանը, հողը մշակեն,
հայի կրթական անունդն ու պաշարը հարբա-
տացնեն: Այս մանաւում ու միջ նարինաս կրծու-
ալար մաներով ողջ ժամանակը մաս եւ արական մէջ
գտախիզաւ Ս ծարական իւնաւում ով նառա-
բայ մինահե նարակը (քանի բայսակը Ս) ։



ՓԱ. բբացած Հայաստանի ահա այս հայ-
րախնամ վարդապետն էր, հայոց աշ-
խարհի այս վերանորոգիչն էր, հայ ժողովրդին
միմիթարող, հայ գրականութեան «ոսկէ գարը»
նախածնող, հային մալրենի լեզուի ուսու-
մովը կազզուրող սուրբ Մեսրոպն էր: 441
թւին, Փետրուարի 19-ին Վաղարշապատի Կա-
թուղիկոսարանում վերջին շնչի հետ Հայա-
տանին օրհնող, հայերին «սէր ու միաբանու-
թիւն» աւանդող 81 ամեայ ալեսորը...
Նրա պատուական նշխարներին ժառան-
գորդ լինելու համար սաստիկ վէճ բարձրա-

ցաւ: Վաղարշապատցիք, չը կամենալով ի-
րենց ձեռքից թողնել այն անգին դանձը,
պնդում էին թէ պէտք է նոյն իսկ Եջմիած-
նում-սրբերի հանգստարանում — ամփոփել մար-
մինը: Համատոհմականները, ազգակեցներն ու
գաւառակիցները (մշեցիք) ասում էին թէ
պէտք է տանել Տարօն, իր հայրենի երկրի
ծոցումը հանգիստ տալ: Աշակերտներից շա-
տերը ստիպում էին, որ տանեն նրա առա-
ջին քարոզութեան դաստակերտ Գողթան դաւա-
ռում իր անունով կառուցած Մասրեվանք
(Մեսրոպալ վանք) վանքում թաղեն. բայց
ամենքին լաղթեց հայոց աշխարհի մեծ հա-
զարապետ Վահան Ամատունին, որ առնելով
սուրբ Մեսրոպի մարմինը Հմալեակ Մամիկո-
նեանի օժանդակութեամբ, եկեղեցականների
ու աշխարհականների մեծագումար բազմու-
թեամբ, սազմոսներով, օրհներգութեամբ, վա-
ռուած կանթեղներով ու ջահերով, երկրային
ու երկնալին զարդերով և ամենալն մեծա-
շուք հանդիսով տարաւ իր Օշական գիւղը
և ամփոփեց գիւղի եկեղեցու սեղանի ներ-
քոյ: Պատմագրի ասելով՝ խաչաձև լուսա-
ւոր երկնալին նշանն առաջնորդում էր դա-
գաղին մինչև Օշական գիւղը, մինչև սուրբ

զարդապետի նշաների ամփոփելը:

Երեք տարի անցնելուց յետով, Ամատու-
նի Վահանին լաջողվում է տաշած քարե-
րից քանդակուած մի սքանչելի խորան կանգ-
նել Սուրբ Մեսրոպի հանգստարանի վրա,
որի սեղանը ոսկեալ, արծաթեալ և ականա-
կուոր փառաւոր զարդերով է զարդարում:

առաջինը կ եւանցն զիյամանակ ուն
նարաւոյ վախճանի վախճանի մասն և այ
սահմանակի մասն ու զարդարան կանգնած: Ո
դժու մ' ամ ունի ՏԵՇԻ հայթեավեճ չ մասն
իրավիւնդը զարդերանիով և բուժք յարքան
առիւ չառա հարուցայիր յազգ և մասնաշին
զաք իսթարակ մաֆառմարազը դժ, աղի մասն
ուղարկան հրազգը: Ա յարագումայի չ եւաղբար
ու սնայր մասնիաբազմայի միաձայն
հրազգամատաց խոյ մասն չել նաև ք զա և
ուրաւ եւ միջան չելոյ բազմայ ու մա մի և
չ նախը ու ոսք զարգութ մշացում ունիւնիւած
մայր և իսկ միջարձք այս ուղայիշ միաձայն
: իսցամբարաց չառ
ու մատիւրաց զարձակ մամրացը: Ո

Հայութինս կղմանավեց կամրապդախ
առանձին լուսու ու այլ մարմար գոյն գ. միշ
միաց ծաշտու չ և նախիրչալ միմաշահե դա
քայլ մայութ մաշտու զի ծաւալարմար ընդ
ապի մասպատարմար մասպատարմար պատմ յամ
ամամ և յամ ՅԱԻԵԼՈՒԱՇ բարձրարմար ընդ
անդարձու չ խորապատարմար դամ ու ուղի ու ուղի

ՅԱԻԵԼՈՒԱՇ

Այդ ժամանակից անցնում է 1429 տա-
րի և իշխան Ամատունի Վահանի կառուցած
Ս. Մեսրոպի խորանը գլխովին վերաշնու-
թեան է ենթարկվում: 1873 թւին 'ի Տէր
հանգեալ Գէորգ Գ. կաթուղիկոսը, հիմնվելով
Սմբատեան Մեսրոպ եպիսկոպոսի առաջարկու-
թեան վրա, իր հայրապետական կոնդակով կար-
գագրում է վերանորոգել Ս. Մեսրոպի տաճարը:

Տաճարի վերանորոգութեան գործը լա-
ռաջ է գնում թէ նոյն իսկ օշականցիների
և թէ առ հասարակ ուրիշ հայերի օժանդա-
կութեամբ: Նորաշէն տաճարը կառուցված է
միենոյն հիմքի վրա գեղեցիկ ձևով և վայե-
լուչ քանդակներով:

Ս. Մեսրոպեան տաճարի շինութիւնն ա-

ւարտուեց 1880 թւին, բացի գմբէթից, որ
մնում է մինչեւ այսօր:

Նորաշէն այդ խորանն օծուեց 1880 թւին
Հոկտեմբերի 9-ին, Ս. Մեսրոպ թարգմանչի
լատկական տօնի օրը Նորին Սրբազնութիւն
Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով:

Այսօր էլ կանգնած է Օշական գիւղում
Հալոց այդ մեծ վարդապետ-Մուրբ Մեսրոպի
խորանը, ամփոփելով իր մէջ լաւիտենական
պարծանաց արժանի մեծագործ Մաշտոցի, ան-
գուգական հայրենասիրի սրբազան նշխարները:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԵՎԵՆ	ՏԱՐ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
3	2	Էզմիածնի	Էջմիածնի
„	„	Սենողի	Սինողի
5	23	Չամչեանի	Չամչեանի
7	1	Վարագպետ	Վարդապետ
24	7	2 - 6	26
27	11	ամենքն է	ամենքն է
„	16	սարի	սարից
30	15	լեզուի	լեզուի



